

Ասադ բ. Եազիր բ. Մաղեադ աշ-Շէյ-
բանի 195 (Ղադ., Թ. 49):

Իսհաբ բ. Սուլէյման ալ-Հաշիմի 196
(Ղադ., Թ. 50):

Ասոր տեղապահը ալ-Ֆադլ բ. Իսհաբ
բ. Սուլէյման:

Թահիր բ. Մուհամմէդ առ-Սանանի
196—197 (Ղադ. Թ. 51):

Սուլէյման բ. Ահմէդ բ. Սուլէյման ալ-
Հաշիմի 197 (Ղադ., Թ. 52):

Ալ-Աբբաս բ. Չուֆար (?) 197:

ԱԱ բ. Աբու Աբդալլահ (?) 198—(?):
Հատիմ բ. Հարսամա բ. Այեան 201—
203 (Ղադ., Թ. 53):

Եահեա բ. Մուադ բ. Մուսլիմ 204 (?)—
205 (Ղադ., Թ. 54):

Իսա բ. Մուհամմէդ բ. Աբու Խալիֆ
205—208 (Ղադ., Թ. 55):

Սադաբա բ. Ալի բ. Սադաբա ալ-Ադիբ
(Չուբայբ) 208—209:

Աբդ ալ-Ալա բ. Ահմէդ բ. Եազիր բ.
Ուսէյբ առ-Սուլամի 209—211 (Ղադ.,
Թ. 57):

Խազիր բ. Եազիր բ. Մաղեադ 212—217
(Ղադ., Թ. 58):

Ալ-Աբբաս բ. ալ-Մամուն 217—218,
ասոր ներքեւ՝

Աբդալլահ բ. Մուսադ ալ-Ասադի
(Ղադ., Թ. 59):

Ալի բ. Աբդալլահ բ. Մուսադ ալ-
Ասադի:

Աբդ առ-Ռահման բ. Խաբան (?) :

Ալ-Հասան բ. Ալի ալ-Բադրի ալ-Մա-
մունի (Ղադ., Թ. 60):

Վերջինս գուցէ ալ-Մութասիմի ժա-
մանակ է:

Թարգմ. Հ. Վ. ԻՆՊԻՆՏԵՆ



**ՎՐԵՍՏԱՆԻ ԹԵՄԵՎԵԼ ԵՌԵՋՆՈՐԳ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐՐԵՑՈՒ
ՆԵՄԵՆՆԵՐԸ**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՂԱՐԻՄԵՑՈՒՆ

Յովհաննէս Կարբեցին յայտնի է մեր
պատմական գրականութեան մէջ. նրա մա-
սին ամբողջ հաստիքներ են գրուած: Այստեղ
մեր նպատակը համեստ է եւ սահմանափակ՝
ուրուագծել Կարբեցու կեանքի եւ գործու-

նէութեան մի քանի կէտերը միայն, որոնք
անհրաժեշտ են ուղիղ ըմբռնելու համար
նրա ստորեւ հրատարակուող նամակները:

Կարբեցու պատմական ասպարէզ էլնելը
անսպասելի երեւոյթ էր եւ պայմանաւո-
րուած էր ուսական նորամուտ «քաղաքա-
կանութեամբ», աւելի ճիշդ՝ Գրաֆ Պաս-
կելիչի թշնամական տրամադրութեամբ
դէպի Ներսէս Աշտարակեցին: Որքան ան-
սպասելի էր Կարբեցու կաթողիկոսական ա-
թոռին հասնելը, այնքան այնչափ եւ ան-
փառունակ էր նրա կաթողիկոսական գոր-
ծունէութիւնը: Այդ գործունէութեան հիմքը
դրուել էր 1829 թ. Հոկտեմբերին, երբ Պաս-
կելիչը նրա եւ Կարբեցի Սերովբէ վարդա-
պետի խորհրդակցութեամբ որոշեց նրան
տալ Վրաստանի առաջնորդութիւնը, որ ան-
սայթաք տանում էր դէպի կաթողիկոսու-
թիւն, որ Յովհաննէս արքեպիսկոպոսը
ջլատի Ներսէսի աղբեցութիւնը Թիֆլիզում
եւ էջմիածնում:

Յովհաննէս Կարբեցին ծնուել է Կարբու-
մօտի Յովհաննապանքում 1762ին պատա-
նէկութիւնն ու երիտասարդութիւնը նա անց-
կացրեց Մոզնում եւ էջմիածնում Ղուկաս
կաթողիկոսի օրով եւ զբաղուեց այն ժա-
մանակուայ դիտելիքներով: Նրա հետագայ
գործունէութեան բնորոշ կողմը կազմում է
նուիրակութիւնը, որպիսի պաշտօնով նա
գնում է Մուշ, Իսպահան, Թիֆլիզ եւ աւելի
ուշ՝ Թոխաթ, Կեսարիա, Ադուանից աշ-
խարհ, Կոստանդնուպոլիս. գործունէութեան
միւս կողմն է, եպիսկոպոսանալուց յետոյ
(1807 թ.), աւագ լուսարարութիւնը:
1825 թ. նա էջմիածնի միարանութեան
խնդրանքը եւ Երեւանի Հիւսէյն խան Սար-
գարի հրամանով նշանակուեց «փոխանորդ
կաթողիկոսի ծայրագոյն կառավարիչ Աթո-
ռային գործառնութեան»:

Կարբեցին չէր կարող պարծենալ իր
գիտութեամբ, բայց նա ուշիմ էր, ճարպիկ
եւ կտրուկ եւ միարանութեան աչքի ըն-
կնող անդամներից մէկն էր: Նա ատում էր
Ներսէս Աշտարակեցուն, բայց վախենում էր
նրանից եւ ոչ միայն մասնակցում էր Սի-
նոզի անդամների սովորական «ամենախո-
նարհ» դեկլացագրերին, որ վերջիններս ու-
ղարկում էին Բեստարաբիա Ներսէս Աշտա-
րակեցուն, այլ եւ նա այն գրութեան ստո-
րագրողներից մէկն էր, որով Սինոզի ան-
դամները գտնելով (1828 թ. Հոկտեմբերի

13ին), որ վանքի գործերը խախտուել են
Ներսէսի բացակայութեան միջոցին, թույլ-
տուութիւն էին խնդրում Եփրեմ Կաթողի-
կոսի գլխավոր կայսեր եւ խնդրելու, որ
Ներսէսին վերադարձնի Բեստարաբիայից:
Ահա այդ գրութիւնը.

Հրամայեցի գրել որպէս արժան է
նորին մեծութեան կաթողիկոս
ամենայն Հայոց Եփրեմ:

Վեհափառ Օծութիւն.

Ամենաողորմած Տէր.

Ներսէս բարձր Սրբազան Արքեպիկո-
պոսն նշանակիր Ասպետ, զոր վեհափառ
Օծութիւնը Ձեր սուրբ բարեհաճութեամբ
ձերով՝ գրով եւ բանիւ ընտրեալ եւ հաս-
տատեալ էք նախաձայն անդամ կառավա-
րութեանս եւ ընդհանրական ծայրագոյն
Կառավարիչ սուրբ Աթոռոյս եւ յաջորդ
Ձեր, հեռանալովս աստի ի սրբոյ Աթոռոյս,
ամենայն կառավարութիւնք մեր եւ ազգա-
օգուտ կամ աթոռաչափ գործք եւ առաջա-
դրութիւնք անկարանան ըստ օրինի որպէս
արժանն է ընթանալ, եւ օր ըստ օր է գրեթէ
ի դժուարինս յառաջանան. վասն որոյ ամե-
նախոնարհաբար խնդրեմք յԱստուածարեալ
Օծութեանէ ձերմէ, եթէ կարելի ինչ համա-
րեսլիք եւ պատշաճ, տալ մեզ հրաման՝
խնդրամտոյց լինել գրով առ Նորին կայ-
սերական Մեծութիւնն, զի ամենաողորմա-
ծաբար բարեհաճեցի օր յառաջ վերադար-
ձուցանել զնորին բարձր Սրբազանութիւնն:

Վեհափառութեան ձերում

խոնարհ ծառայք, եւ անդամք կառավա-
րութեան Աթոռոյս
Յովհաննէս Ստեփաննոս եպիսկոպոս
Արքեպիսկոպոս Մանուէլ վարդապետ
Վեհապետեան Յովսէփ վարդապետ:

Յամսեանն Հոկտեմբերի 13,
1828 ամի ի սուրբ էջմիածին:

Որպէս հետեւանք այս գրութեան՝
Եփրեմ կաթողիկոսը 1828 թ. Հոկտեմբերի
18ին պատշաճ բովանդակութեամբ մի
խնդրագիր ուղղեց կայսեր:
Կարբեցին ազա՛հ էր, շահասէր եւ փա-
ռամոլ: Դեռ արեղայ ժամանակից նա հե-
տամուտ դրամ ժողովելու եւ այդ անում

էր ամենապայանդակ միջոցներով՝ որպէս
նուիրակ, թէ Վրաստանի առաջնորդ. նա
փառասէր էր եւ գաղտնի երազում էր կա-
թողիկոսական գահի մասին: Նա բռնակալ
էր եւ դաժան. բաւական է յիշել այն տա-
ռապանքները, որ կրեց նրա ձեռքից Յով-
հաննէս վարդապետ Ղրիմեցին տարիներ շա-
րունակ եւ կամ միարանութեան ըմբոստ
ելոյթի առթիւ աքսորուած վանականները:
Այդ բոլորով հանդերձ իշխանաւորների մօտ
Կարբեցին համեստ էր, հեղահամբոյր եւ
համակերպուող. վերջապէս նա Ներսէսի
ոխերիմ թշնամին էր եւ այս յատկութիւն-
ները միանգամայն բաւական համարեց Պաս-
կելիչը յանձնելու նրան տխուր դերը, որ
նա կատարեց անցեալ դարի երեսնական
թուականներին:

Վերելը յիշուեց, որ 1829 թ. Հոկտեմ-
բերին Պասկելիչը հրաւիրեց Յովհաննէս
Կարբեցուն Թիֆլիզ եւ որոշեց տալ նրան
վրաստանի առաջնորդութիւնը, որի վրայ
դեռ յաւակնութիւն ունէր Ներսէս Աշտա-
րակեցին հեռուոր Բեստարաբիայից: Կարբե-
ցու առաջնորդական պաշտօնի մէջ հաստա-
տուելու հրամանը ստացուեց 1830 թ. Սեպ-
տեմբերին, բայց նա դեռ Յունիսիւն Թիֆլիզ
էր գնացել իր հաշիւները մաքրելու Ներ-
սէսի անձնուէր կուսակից Ալամդարեանի եւ
առհասարակ Ներսիսեան զպրոցի հետ: Կար-
բեցին յաջողութեամբ ազատուեց Ալամդա-
րեանից՝ Պասկելիչի օգնութեամբ նրան էջմի-
ածին ուղարկելով, որպէս զի այնտեղ
նա պատժուի կաթողիկոսի ձեռքով եւ Պաս-
կելիչի մեծ ու փոքր արբանեակները՝ իշ-
խան Բէհրուզեան, Սերովբէ վարդապետ
եւ այլն համապատասխան հրահանգներ
ստացան եւ միջոցներ ձեռք առան:

Այս շրջանումն էր ահա, որ ծայր տուե-
ցին Յովհաննէս Կարբեցու նամակները Յով-
հաննէս վարդապետ Ղրիմեցուն: Սերովբէ
վարդապետը 1830 թ. Մայիսին ուղարկուեց
Պասկելիչի կողմից իշխան Վ. Բէհրուզեանի
հետ Եփրեմ կաթողիկոսի մօտ, բռնադա-
տելու վերջինիս, որ Սերովբէին եպիսկո-
պոս ձեռնադրի: Այդ ժամանակ իշխան Բէհ-
րուզեանը եւ Սերովբէն խոստումներով եւ
սպանալիքներով իրենց կողմ գրաւեցին մի
չարք վանականների, որոնց թուում նաեւ
Յովհաննէս վարդապետ Ղրիմեցուն. եւ
քանի որ վերջինս խոշոր դեր էր խաղում
էջմիածնում որպէս Սինոզի անդամ-ատենա-

դպր, սկսուեցին նրան խոստումներ շարաններ Յովհաննէս Կարբեցու եւ Սերովբէի կողմից, որոնք եւ արտայայտուած են նրանց նամակներին մէջ: Այդ խոստումները խոստումներ մնացին, բայց Ղրիմեցի վարդապետը կաշուց դուրս էր դալիս բաւարարելու երկու արքեպիսկոպոստների պահանջներին: Ի հարկէ, այս յարարերութիւնները չխանգարեցին Յովհաննէս Կարբեցուն մօտիկ ապագայում այնպիսի անսիրտ հալածանք սկսելու Յովհաննէս Ղրիմեցու դէմ, որից նա հեծում էր տարիներ շարունակ եւ որոնք նուաասացրին նրան հողեպէս եւ քայքայեցին նրա Փիղիբական առողջութիւնը:

Յովհաննէս Կարբեցուն Թիֆլիզի առաջնորդութիւնից մի քայլ էր մնում միայն մինչեւ խոստացուած կաթողիկոսական գահը, որ եւ իրականանում էր Եփրեմ կաթողիկոսի վերջնական հրատարականով, որ տեղի ունեցաւ 1830 թ. Հոկտեմբերի 8ին, Ալամդարեանի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ:

Այնուհետեւ տեղի ունեցան կաթողիկոսական «ընտրութիւնները» իշխան Վ. Բէհբուզեանի եւ Սերովբէ արքեպիսկոպոսի ղեկավարութեամբ եւ որպէս հետեւանք այդ ընտրութիւններին՝ Ամենայն Հայոց հայրապետական գահը բարձրացաւ Կարբեցի Յովհաննէս Արքեպիսկոպոսը:

Նամակների մէջ առանձին փայտաշանքով յիշատակուած է վարդապետների մի երրորդութիւն, որ կազմուեց Յովհաննէս վարդապետ Ղրիմեցուց, Յովսէփ եւ Ղուկաս վարդապետներից Սերովբէի եւ Կարբեցու ջանքերով: Սրանցից Յովսէփ վարդապետը երբեմն Ներսէսի զօրեղ կուսակիցն էր, մի ժամաւ մարդ, որին վերջինս Բեսսարաբիա զնայուն յանձնել էր էջմիածնի ընդհանուր կառավարութիւնը եւ որի առաջ դողում էր Կարբեցին... 1830 թ. Մայիսին իշխան Բէհբուզեանի էջմիածնում ունեցած առանձին տեսակցութիւնները Յովսէփ վարդապետի հետ ճանապարհի բերեցին գոռոզ վարդապետին եւ նա երես թեքեց Ներսէսից... Ետեակ վարդապետների խմբին մօտիկ էր կանգնած Կեսարացի Բարսեղ Արքեպիսկոպոսը, նոյնպէս Աշտարակեցու նախկին կողմնակիցներից: Խումբը գործում էր Աշտարակեցու դէմ...:

Հրատարակուող նամակներից առաջինը գրուած է 1830 թ. Յունուարի 4ին, նախ

քան Սերովբէի էջմիածին դնալը եւ վարդապետների խմբակի կազմակերպուելը: այստեղ ոճը եւ վերարեւմուծը բոլորովին այլ է, քան յետագայ նամակներում, երբ պայմանները միանգամայն փոխուած էին...:

Բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ

Սիրելի մեր.

Ձգրութիւնդ ի 19երրորդէ Դեկտեմբեր ամսոյ ստացեալ ծանեաք՝ զամենայն իմացուածսն, շնորհակալեալ զփութոյ եւ զջանից ձերոց՝ որ ի կողմանէ ամենայն ծանօթատուութեանց եւ իրաց յայանելոց ի ձէնդ: Նախ քան զստանալն զնոյն՝ գրեալ եմք եւ մեք ի մերս կողմանէ սրբազան սրնոթական կառավարութեան ի 21 Դեկտեմբեր զամենայն հանգամանս ներկայանալոյ մեր նորին պայծառափայլութեանն եւ մատուցման ընծայից մերոց, առ որ տակաւին մնամ անպատասխանի եւ սպասեմ լիագոյն լրման նպատակեալ յառաջագրութեանց մերոց: Յերկրորդում պարբերի գրութեան ձերոյ նշանակի թէ՛ «վասն նուժբայի նորին պայծառափայլութեան զոր խնդրեալ էր իմ իմանալ որոշակի, գրեալ ես որպէս արժանն է առ նորին բարձր Արժանապատուութիւն Յովսէփ վարդապետի եւ նա պատասխանեալ է Ձեզ թէ գրել է ինձ լիով վասն նորին եւ այլ հարկաւորացն ամենայնի»՝ այլ ես մինչեւ ցոյն կէտ չեմ ինչ ստացեալ ի նորին բարձր Արժանապատուութեանէ՝ թէ առ ի՞նչ վախճան իցէ յամեցողութիւնն, անյայտ է ինձ: Բաց յայսմանէ գիր մի եւս գրեալ եմ առ նորին Օծութիւնն սրբազանապետար Քահանայապետի, որոյ պատասխանին ա՛յնքան հարկաւոր է ինձ, որքան եւ ո՛չ մի ինչ, եւ առ այն եւս տակաւին անտեղեակ մնամ, ոյր վասն խնդրեմ յատկապէս, զի փոյթ տարեալ անձամբ անձին ներկայասլիք նորին Օծութեանն, եւ գիտացեալ զորպիսութիւնն, գրեալիք ինձ. այն զի թէ չէ՛ գրեալ, փութով հրամայեցէ տալ գրել, որ յոյժ հարկաւոր է ինձ: Ի կողմանէ Մինաս եպիսկոպոսին լիով ունիթ տեղեկանալ ի զրոց Սիմէոն Սրբազան Հօրն: Ի 25 Դեկտեմբեր ամսոյ՝ որ օր ծննդեան էր ուսաց, զնացեալ ի տեսութիւն նորին պայծառափայլութեանն, լուաք զայս ինչ. «Ես ասէ յազազս գալստեան ձերոյ յայտնեալ եմ

նորին կայսերական Մեծութեանն, ուր այլ ո՛չ վատահացեալ զպատճառն հարցանել, մնաց այն օր անորոշ, բայց ըստ հաւանման կարծեաց, ինձ թուի թէ վասն ընծայիցն իցէ այս, ըստ որում այն գործ բացադոյն իմն էր ամենեցուն, վասն որոյ եւ անհարին էր թաղուցանել ի տեղեկութեանէ կայսերն: Յաւուրս յայսոսիկ մտին ի քաղաքս երեւելի սենատորք երկուք առաքեալք ի կայսերէ առ ի քննութիւն առնել ամենայն հին եւ նոր անցից եղելոց յայսոսիկ սահմանս, ի ժամանակէ անտի Երմալովայ մինչեւ ցայսր, թուի թէ եւ այլք եւս ունին դալ, վասն որոյ եւ երկբայութիւն երեւի ի միջի յազա կալուածոց մերոց: Մտնդրեալ է իմ, զի զկնի մկրտութեանն եւ ջրօրհնէքի երթալ կրկին ի տեսութիւն կուսակալին եւ զանալ, տեսցուք թէ զի՞նչ լինիցի: Լուեալ զաջողութիւն ինչ յազազս պարտուց թէ ոյն ի գրութեանէ ձերմէ, ո՛չ գիտացաք թէ ո՛րպիսի ինչ յաջողութիւն իցէ, զոր լաւ եւս առնէիք, թէ որոշակի գրէիք ի միամտութիւն մեզ:

Եւ այլով ամենայնիւ յանձն արարեալ զիս ի մաքուր շնորհս աղօթից ամենայն Սրբազան հարց եւ եղբարց

մնամ բարեացակամ ձեզ ի սրտէ խոնարհ Յովհաննէս Արքեպիսկոպոս 1830 Յունուարի 4, ի Թիֆլիզ:

Աստուածառեալ աջոյ նորին Սրբազանապետար Օծութեան կարօտիւ համբոյր մատուցանեմ, նոյնպէս եւ ամենայն հարց Սրբազան Սիւնհոգոսին՝ ողջոյն սիրոյ. խնդրեցես եւ ի գիմաց մեր զպատասխանի թղթին մերոյ գրելոյ ի 29 առ բարձր Արժանապատիւ Յովսէփ վարդապետն, եւ գրամատոյց շնորհին՝ որ իջարագարն էր Կոխբայ, մարդասիրութեամբ հանդիպեալ, սիրաշահութիւնն ցուցիլք՝ որ այլ արժանաւոր է:

Ի Թիֆլիզայ յաւաք լուսարար Յովհ. Արքեպիսկոպոսէ ի 4էն Յունուարի 1830 ամի ի 20 Փետրուարի ստացեալ:

Պատասխանին գրեցաւ ի 24 Փետր.:

Բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ ջերմեակ հարազատ.

Հօրածեոն օգնականութիւն Ամենակաթողին յաջողեաց մեզ մուտ գործել ի վիճակ մեր յայս ի Տիֆլիս ի սկզբան մտի ամսեանս նոյեմբերի, գտեալ զառողջութիւն անձին, եւ ազատեալ ի թիկնացաւոյ անտի՝ զոր կրէաք յաւէտ ի ճանապարհի: Յուսով մնամք, եթէ զամենաջերմեռանդ եւ զհարազատ հաւատարմութիւն ձեր առ սրբազան Սիւնհոգոսն տեղւոյդ եւ զմտերիմ անկեղծաւոր սիրելութիւն ձեր առ մեզ յանեղծութեան ունելով միշտ՝ բարձրամեզ յանուն ձեր յարժանաւոր գովուցուսլիք զանուն ձեր յարժանաւոր գովութիւն, եւ անպակաս առնելով զգրաւոր յայթարարութիւնս առ մեզ՝ շնորհակալու արդարեւ զմեզ կացուցանէք, եւ պարտաւորէք լինել վասն ձեր յար բարեացակամ

արքեպիսկոպոս հայոց վրաստանեայց Յովհաննէս: Համար 12, ի 8 նոյեմբերի 1830 ամի, ի Տիֆլիս:

Բարձր արժանապատիւ առենադպիր եւ անդամ սրբազան Սիւնհոգոսի սուրբ էջմիածնի Յովհաննէս վարդապետ հարազատ մեր ըստ հողոյ.

Ընկալեալ եւ ընթերցեալ գերկոսին գրութիւնս ձեր առ մեզ ի 30 երրորդէ Հոկտեմբերի, եւ ի 20 երրորդէ նոյեմբերի այս ամի՝ հասու եղեաք պարունակելոցն ի նոսին իմաստից, ունելով զշնորհակալութիւն զանկեղծաւոր եւ զամենաջերմեռանդ հաւատարմութեանէդ առ մեզ:

Յնձամք ի հողի՝ երբ լսեմք, եթէ ճշմարիտ հպատակութիւն ձեր առ Աթոռն եւ հարազատ կապակցութիւն ընդ սրբազան Սիւնհոգոսին օր ըստ օրէ առաւելեալ փայլել փայլէ. եւ յաւէտ՝ հաստատուն պահելով զգօղ շաղկապիչ սիրոյն ի մէջ երեցունցդ, այն է՝ բարձրարժանապատիւ Յովսէփ եւ Ղուկաս վարդապետաց՝ ակն ունիմ, թէ եղիջիք օգտաբեր եւ պիտանի սրբոյ Աթոռոյդ, որով եւ միխիթարիչ՝ մերումս ծերութեան, գոլով զօրացեալք յամենայնի. ըստ որում առասան երեքկուղի ո՛չ վաղվազակի խղեսցի, որպէս ստացեալն է:

Գրեցաք առ յիշատակեալ երկուսն հարազատսն մեր Յովսէփ եւ Ղուկաս վարդապետսն, զի ունիցին զձեզ յամենայնի հարգակից ի բանս եւ ի խորհուրդս զովական միաւորութեամբ հարազատ սիրելութեան, որպէս եւ զսրբազան Բարսեղ Արքեպիսկոպոսն՝ յորժամ եկեսցէ այդը:

Մնամք վասն ձեր

բարեացակամ միշտ

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանեայց Յովհաննէս:

Համար 35.

Ի 29 Նոյեմբերի 1830 ամի, ի Տփլիս:

Վասն պատանեկին Մկրտչի անհող լեւուրք, զի ունիմք զնա ընդ պահպանութեամբ ըստ որում յանձնեալ էք զնա միանգամ մեզ: Ձայլ ամենայն որպիսութիւն կողմանցս կարէք իմանալ ի գրութեանցն մեր առ սրբազնակատար Կաթողիկոսն եւ առ Սիւնհոգոսն:

Առ բարձրարժանապատիւ Ատենադպիր եւ Անդամ սրբազան Սիւնհոգոսին էջմիածնի Յովհաննէս վարդապետ Ղրիմեցի:

Ի սուրբ էջմիածին:

Համար 35.

Ի 12 Դեկտեմբերի ստացեալ:

Բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ ատենադպիր եւ անդամ սրբազան Սիւնհոգոսի մայր Աթոռոյն Արարատեան

ամենահարազատ սիրելի:

Թէ յինչ ունիցին եզերել զէպք իրացն, ի գրութեանց մերոց առ սրբազնակատար Հայրապետն եւ առ սրբազան Սիւնհոգոսն՝ մարթիք իմանալ:

Մնայ ձեզ արդ զրել զթուղթ մի առ պայծառափայլ Գրաֆին ի զիմաց նորին վեհափառութեան յաղագս կամովին հրատարման իւրոյ ի պատրիարքական իշխանութեան ըստ օրինակին, զոր եղաք ի թղթի մերում՝ որ առ նորին վեհափառութիւնն, եւ ի նմին զնեկ զօրինակ զորոյ Սիւնհոգոսին՝ որ յաղագս հաստատելոյ իւր զընտրութիւն նորոգ կաթողիկոսի: Յօրինել պարտիք ապա եւ զերկուս այլ թուղթս զարձեալ ի

զիմաց նորին վեհափառութեան նովին մտօք եւ նովին զիտաւորութեամբ համառօտ գմին՝ առ նորին կայսերական Մեծութիւնն ինքնակալին ամենայն ուսաց. եւ զմիւսն՝ առ կառավարիչն Մինխտրութեան այլազաւան ազգաց ստատս սեկրետար Դիմիտրիլուզով. զորոց եւ զօրինակսն առանձինն առ մեզ առաքել խնդրեմք:

Նոյնպէս պարտիք զրել եւ առ նորին պայծառափայլութիւն Ֆելզմարչալ կոմսին Երեւանայ ի զիմաց Սիւնհոգոսին ըստ օրինակին՝ զոր եղաք ի թղթի մերում առ Սիւնհոգոսն:

Վստահ եմք ի հարանգատութիւն ձեր, եւ յուսամք, թէ ջանասիրութիւն ձեր փութով ի գլուխ հանցէ զվերոյնշանակեալ գրութիւնսն: Այլ զայս մի ինչ յուշ ամէլ հարկաւոր դատեմք, զի օրինակքն գրութեանց եղեալք ի մէնջ ի թուղթսն՝ որ առ նորին վեհափառութիւնն եւ առ Սիւնհոգոսն պարտին զրել առանց իրիք փոփոխութեան, ըստ որում յեղան այնօրիկ ի ուսաց բարբառ եւ ընդ լուրթեամբ պատուելի են, որպէս զիտէք: Իսկ փակէթացն ծայրք պարտին մնալ անկցորդ՝ սակայն գրութեամբ կնքոցն ի վերայ. եւ այնպէս առաքել առ մեզ, զի եւ մեր եղեալ ի նոսին զթարգմանութիւնսն եւ զմոսփակեալ՝ մատուցուք նորին պայծառափայլութեանն:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանեայց Յովհաննէս:

Համար 63.

Ի 13 Դեկտեմբերի 1830 ամի, ի Տփլիս:

Բարձր պատուոյ արժանաւոր Յովհաննէս վարդապետ անդամակից Սիւնհոգոսի սրբոյ էջմիածնի:

Ըստ գրութեան մեր առ Սիւնհոգոսն ի զրել ձեր զկոնդակին նուիրակական յանուն մեր ի վրայ վիճակիս Տփլիսայ յետ կարգելոյ ըստ սովորութեանն զբանս օրհնութեան՝ միթարութեան եւ յորդորանաց առ Հասարակութիւնն՝ յարմարել պարտիք եւ զմիջատուած բանն վասն բարեհաճութեան առ այն նորին պայծառափայլութեան Ֆելզմարչալի եւ Գրաֆի յար եւ նման օրինակին՝ որ եղաւ ընդ սմին, յայտարարեալ թէ՛ ըստ բարեհաճութեան նորին պայծառափայլութեան յաջողեաց մեզ այժմ

տարածել ի բարեպաշտ Հասարակութեանդ զմայրենի շնորհս սուրբ տաճարիս՝ առաքմամբ նուիրակի, որ առժամանակ ինչ խափան մնայր արդեօք ի սակս այլ եւ այլ պատճառաց եւն:

Պարտիք յօրինել ապա արժանաւոր բարեմաղթութեամբ եւ զթուղթ իմն շնորհակալութեան ի զիմաց կաթողիկոսին առ նորին պայծառափայլութիւնն յաղագս բարեհաճելոյ նորա ըստ միջնորդութեանս մերոյ ի նուիրակել զվիճակ զայս:

Առաքեմք ընդ սմին զերկուս հատորս նաֆայ կոչեցեալ մուշտակաց, զոր ստացեալ ի պարոն Մեսրոբայ՝ մատուցիք նորին վեհափառութեան:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի

Յովհաննէս:

Համար 80.

Ի 18 Դեկտեմբերի 1830, ի Տփլիս:

Ի Թիֆլիս, ի Յովհաննէս սրբազանէ, ի 18էն Դեկտեմբերի 1830, ի Յունուարի 1831 ստացեալ:

Սրբազան Բարսեղ Արքեպիսկոպոս եւ հարազատ սիրելիք բարձր արժանապատիւ ատենադպիր Յովհաննէս Յովսէփ եւ Ղուկաս վարդապետք:

Ի Քրիստոս սիրելեալք իմ.

Ձգիտաւորութիւն գրութեանս առ բարձր սրբազան Սիւնհոգոսի ի հարկէ ունիք իմանալ անպատճառ, ի մասին գալստեան սրբազան Սերոբէ Արքեպիսկոպոսին այդր որպէս գրեալ եմք Սինողական եղբարց վասն զատարկելոյ կամ պատրաստելոյ զմոսմատուեն յաղագս նորա. միայն թէ Աւագ լուսարար սրբազան Ստեփաննոս Արքեպիսկոպոս եղբայրն կարելի է օգուտն զմտածելով հակառակի անդէն ելանելն. վասն որոյ զրեմ ձեզ սիրակցացդ ի միասին յորդոր լինել նմա. զի ելցէ անդէն եւ երթիցէ այն տեղի, զորս նշանակեալ է ի զորոյն սրբազան Սինողականաց. իսկ արդ եթէ յիշեալ Արքեպիսկոպոսն եկեսցէ եւ ոչ գտանիցէ նոյն տեղն պատրաստի, կարծեմ թէ այն ոչ օգուտ ձեր է եւն:

Եւ որքան կարելին է կրկին անգամ յորդորել եւ հանել զնա անդրէն, քանզի եւ

սա՛ զարդիս ո՛չ սակաւ պիտոյեացաւ վասն օգտի ազգին եւ սակս սրբոյ Աթոռոյդ, եւ երեւի թէ ունի անխոնջ ջանքս հետեւեալ եւ պիտոյեալ յայլ եւ այլ գործս՝ եւ Աստուծով լրուին բարի է, եւ լաւ, հանդերձ յաջողութեամբ: Աներկբայս լերուք եւ աղօթեցէք:

Եւ մեք եմք եւ մնամք միշտ բարեացակամ ձեզ. եւ աղօթաւոր:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Յովհաննէս:

1831 ամի. Յունուարի, ի Տփլիս Գաղաք:

Չկոնդակին եւ զՄեռոնն զորս պահանջեալ էք ի մէնջ. եթէ մինչ ցարդ ուղեւորեւեալ էք, բարուք, իսկ թէ ոչ, այլ մի՛ ստաքէք:

Ձայն՝ զորս նշանակեալ եմք վասն Գեղամեան Ստեփաննոս եպիսկոպոսին գնալ ի սենեակ հանդուցեալ Գրիգոր եպիսկոպոսին. եւ մի ի սենեակ իւր, այն չէ առանց պատուի. ըստ որում երեւի թէ մեք եւս ունիմք զալ այդր. ուրեմն այնպէս տնօրէնութիւն առնէք որ նա երթայ իւր նշանակեալ տեղին. որ ի զալս իմ, ես երթայցեմ անդր, ուր կայ այժմ Բարսեղ եպիսկոպոսն, զայս առանձին մնացէ ի ձեզ. զի այլք մի իմացեն:

Առ բարձր արժանապատիւ ատենադպիր՝ Յովհաննէս վարդապետն:

Բարձր պատուոյ արժանաւոր Յովհաննէս վարդապետ անդամակից Սրբազան Սիւնհոգոսի:

Ընկալեալ զոր ի 8 երրորդէ ամսեանս զգիր ձեր համարով 13 ծանեաք զորս ի նմին զամենայն:

Եւ նոքա յաղագս փութոյ եւ ջանադրութեան ձեր ի մասին հարկաւոր թղթոցն, շնորհ ունիմք զձէնջ յոյժ, յոյժ. խնդրելով, զի ամենազօր ձեռն Տեառն զօրացուցէ զձեզ ի զիտաւորութիւն սրբոյ Աթոռոյդ:

Ի մասին հարկաւոր թղթոցն թէ զի՛արդ ունիմք տնօրինել. եւ կամ զայլ եւս պարագայս զիտելեաց, ունիք իմանալ ի գրութեանց մերոց առ Սրբազնասուրբ վեհապետն եւ առ Սրբազան Սիւնհոգոսն:

Առաքել այժմ ի զիմաց Սրբազնակատար վեհին զբանակէյ յանուն Կարապետ Արքե-

պիսիկոսի յԱխլցոյ անպատշաճ թուելով մեզ, առաջադրեմք ձեզ. ծանուցանել զայսմանէ նմին Սրբապետական Կեհեմ, զի համբերեցէ առ ժամանակ ինչ, մինչեւ ծանուցուի զդիպաւոր ժամանակն արաքելոյ, քանզի արդէն աստ գոլով նա ինքն Կարապետ Արքեպիսկոպոսն, զուցէ անձամբ անձին ներկայացի այդ նմին Վեհափառութեան, եթէ ոչ արկցին ի մէջ պատճառք արդելոյ:

Ղենարալ Կենեղ Բէհրուզալայ եղբայր Գաւթի անուն զինի աւուրց ինչ ունի ճանապարհորդել յայդ կոյս. ընդ նմին ունիմք ուղղելորել զպարտ ու պատշաճ դրութիւնս թէ առ Վասիլի Կենեղ Բէհրուզովն, եւ թէ առ գրագիր նորին պարոն Նիկողայոսն Տէր Շմաւոնեանց, ըստ որում անձն աշխատաւոր եւ պիտանի: Նաեւ զորացոյցան՝ զորս ինքերեալ էր ձեր:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանեայց Յովհաննէս:

Համար 28.

Ի 17 Յունուարի, 1831 ամի, ի Տփլիս:

Ողջոյն Հայրական սիրոյ մատուցեալ Յովսէփ եւ Ղուկաս բարձր արժանապատիւ վարդապետաց՝ ցանկամ ամենայն ցանկութեամբ սրտի եւ հոգւոյ, զի երեքանդ միով հոգևով եղիջիք իբրեւ առասան երեք՝ ճաղի անխելի:

Ի Թիֆլիզոյ:

Ի Յովհաննէս Արհուլոյն առ իս ի 17էն Յունուարի 1831, ի 23 նորին ստացեալ ամսեան:

Գերապատիւ Բարսեղ Արքեպիսկոպոս, Յովհաննէս, Յովսէփ եւ Ղուկաս վարդապետք բարձր պատուոյ արժանաւորք Սիրեացեալք ի մէնջ:

Ձեզ չորեցունցդ զինչ ինչ զկարեւորացն տեղեկութիւն շնորհեցէ զերապատիւ Արքեպիսկոպոսն Սերոբէ յողջամբ ժամանելն իւր այդր:

Ձայս մի ինչ առաջի առնեմ սիրելեացդ ի մի հոգի շողկապելոց, զի զգուշաւոր խոհեմութեամբ ջան զիջիք պահել յամենայնի զյարգ նորուն Արքեպիսկոպոսի արժանապատիւն զպատուաբարութեամբ, ընթանա-

լով միշտ ըստ ըզձանաց սրտի նորա, եւ ունելով զաջարուրջ արթնութիւն յամենայն ի բանս կամ ի խօսս ձեր ընդ նմա՝ զգուշացէք չերեւցուցանել զօտարութիւն ինչ երեւակ ընդդիմակ նորայն կամաց:

Յաղագս իրաց Մանուէլ եւ Յարութիւն վարդապետաց եւ Գէորգայ Արարատովի՝ զորոց գրեալ էր ձեր Յովհաննէս վարդապետ ի թղթի անդ ձերում ի 15էն այսր ամսեան համարով 5, մնայ մեզ խօսել զարժանաւորն ի գալ մեր այդր Տեառն յաջողութեամբ: Ընկալեալ եւ զթերթիկն ձեր ի 22էն սորին ամսեան՝ հանդերձ գրութեամբ սրբազանապատար Տեառն՝ եմք բարեացաւ կամ միշտ

Ձեր չորեցունցդ

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանեայց Յովհաննէս:

Համար 52.

Ի 30 Յունուարի 1831 ամի, ի Տփլիս:

Բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ.

Ձինչ ինչ իրաց զկարեւորագոյն տեղեկութիւնս մարթիս իմանալ ի գերապատիւ արքեպիսկոպոսէն Սերովբէ. զոր որչափ կարիցէ քո փոյթ կալցիս սրտազիւր պահել արժանապատիւն յարգանք պատուաբարութեամբ, զի է այր պիտանի բազմօք սրբոյ Աթուոյդ:

Գրեալն ի քէն թուղթ հաս առ իս ի 2 Փետրուար ամսոյն ընդ նմին եւ գրութիւն սրբազանապատար Տեառն. որոց տեղեակ եղաք եւ լիցուք դիտաւորութեացն:

Ձգիւրն գրեալ յանուն Սերովբէ Արքեպիսկոպոսի ստացեալ մեր յետ ելանելոյ նորա աստի ի 2 Փետրուար. առաքեմք այժմ ընդ ամին, հասուսջիք ինքեան:

Յովհաննէս վարդապետն Սահակ եպիսկոպոսեան աւարտեալ զպարտաւորութիւն քարանդակին՝ յետ աւուրց ինչ ունի մտանել այսր. եթէ կանխաւ ծանուցեալ էր մեր զգալ նորա ի քարանդակին՝ հոգ տանէաք արդեօք զերծուցանել զնա անտի փութով:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի Յովհաննէս:

Ի 7 Փետրուար 1831, ի Տփլիս:

Գերապատիւ եղբոր Սերովբէ Արքեպիսկոպոսի մատուցանելով յիմմէ կողմանէ զողջոյն՝ ասացես զի ծանուցէ մեզ զորպիսութիւն ճանապարհին՝ ընդ որ եկն ինքն այդր:

(Շարունակելու):

Ո. ԱՐԱՆԱՄԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ՍՅԱՄՊՈԼՈՑ ՂԱՏՄՈՒԹԵՆՆ
ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԵՕՄԻԻՐՃԵԱՆ

Գ Լ Ո Ւ Ս Զ.

(Շարունակելու):

Տող 308:

Աշխատեցաք վարդապետ՝ Նրստոյք ի նաւակս որ սպասման. Փոքր մի քէյֆիկ հասցնեմք՝ եւ գնամք ծովովս ի սէյրան.

Շատ յոգնեցանք՝ վարդապետ, եկիր նստինք նաւը, որ պատրաստ է, քիչ մ'ալ ծովուն վրայ շրջելով զբօսնունք. կ'ըսէ, ու նաւակը երբեւ թէ վախորի եւրոպական ափերն ի վեր քերել տալով, երբեմա Չէլէպի՝ եր հիւր վարդապետին կը սկսի ցոյց տալ ճամբանուն վրայ գտնուած բոլոր կարեւոր շէքերը, բանուն վրայ գտնուած բոլոր կարեւոր շէքերը, մզկիթները, նշանաւոր տեղերը եւ այլն:

Տող 326: Այս տողին մէջ կը յիշէ՝ «Տօլմա պաղչէ» կոչուած ծովագրը, ուր կանգուն է Սուլթանական շքեղ պալատը, զոր շինած են Պալեան մեծանուն Հայ ճարտարապետներն արքունի, ինչպէս նաեւ ուրիշ շատ պալատներ Չրաղանի, Պէյլէրպէյի եւ այլն:

Տող 336.

Ի Պէշիկթաշ գետ կամիս՝ Փոքր մի Հայք ժամատամբ աստ կան: Այսինքն թէ որ կուզես գիտնալ թէ ինչ կայ Պէշիկթաշի վերերը, հոս կ'ըսէ, կան սակաւաթիւ

Հայեր, որոնք ունին իրենց ժամատունը (մատուռ):

Այս ժամատունը, անշուշտ պէտք է հաստատուած ըլլայ, 1661, 1681—1684ի միջեւ, այն թուականներուն՝ երբ երեմիա Չէլէպի իւր պոլսական տեղագրութիւնը կը շարագրէր:

Հ. Ղուկաս Ինճիճեան 1794ին հրատարակած իր «Ամարանոց բիւզանդեան», երկին մէջ կը յիշատակէ այս եկեղեցին գրելով՝

Ի քարեշունչ թաղ ի Պէշիքթաշին, էր եկեղեցի՝ եւ Հայոց Ազգին. փոքրիկ հոգետուն՝ Սուրբ Աստուածածին, քակեալ ի վաղուց՝ կոռուի ինչ շինչին:

Ըսել է՝ որ 1794էն շատ առաջ քան զուած էր այդ եկեղեցին, բայց թէ երբ, այդ չի նշանակեր Հ. Ինճիճեան: Սարգիս Գպիր Սալթի Յովհաննէսեան իր 1800ին շարագրած Կ. Պոլսոյ նկարագրութեանը մէջ՝ երբ կը խօսի Պէշիքթաշի եկեղեցիին վրայ անոր քանդման ժամանակն ալ կը նշանակէ ըսելով.

Գոյր եւ աստանօր եւ ժամատուն մի Հայոց փոքրիկ, յանուն Սուրբ Աստուածածին: Բայց քակեցաւ յայլազգեաց պատճառաւ չնչին ինչ կոռույ ի թուս. հիմնէթին 1172, յամի Տեառն 1759:

Ուրեմն գարու մը մօտ էր գոյութիւնը այդ եկեղեցիին, երբ կը քակուէր 1759ին, եւ կ'երեւի թէ քակուած ալ կը մնար մինչեւ եւ կ'երեւի եւ Սարգիս Գպիրի ժամանակները Ինճիճեանի եւ Սարգիս Գպիրի ժամանակները նախներն ալ անցեալի մը յիշատակութիւնը կ'ընին «էր», «գոյր» ըսելով:

Միայն թէ, հաւանակութենէ զուրկ չեմ համարիր ենթադրել, որչափ որ այդ եկեղեցին 1759ին կը քանդուի, տարիներ վերջը բան մը կը շինուի անոր տեղը՝ գուցէ գաղտնաբար, որովհետեւ 1776 թուին Սերաստացի Տէր Վիւրիզ քահանայ Մանուէլեան գիւղին գերեզ-մանատունը վերջնականապէս ձեռք բերելու կը յաջողի, ինչպէս կ'աւանդեն մեզ այդ գերեզ-մանատունին Արձանագրութիւնները, զորս անձամբ ընդօրինակած եմ 1910ին, եւ զորս կարեւոր կը համարիմ ներկայացնել հոս.

Երեք հատ են ատոնք. առաջինը կը գտնուի,

1 Ամարանոց բիւզանդեան, Հ. Ղ. Ինճիճեան, Վենետիկ, ի Ս. Ղազար 1794, էջ 122: